

ՀՈԿՅԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Անգլերենի քաղաքագիտական բառապաշարը մշտապես համալրվում է նոր բառերով, ինչը բացատրվում է քաղաքական իրադարձությունների բուռն զարգացմամբ: Անգլերենի քաղաքագիտական բառապաշարում ընդգրկվում են տերմիններ և տերմինակապակցություններ, որոնք, ինչպես յուրաքանչյուր գիտության, այնպես էլ քաղաքագիտության բնագավառում, արտահայտում են կարևորագույն հասկացություններ. Զաղաքական, սոցիալական, տնտեսական փոփոխությունների հետևանքով ի հայտ եկած նոր երևույթներն ու հասկացություններն անվանելու կարիք է զգացվում: Լեզվում հայտնվում են նոր բառեր՝ նորաբանություններ, կամ էլ արդեն առկա բառերը հարմարեցվում են նոր իմաստներին:

Նոր բառերի հսկայական հոսքն ու նրանց նկարագրության անհրաժեշտությունն ստիպեց քառագիտության մի նոր ծյուղ ստեղծել՝ նորագիտություն, որը գիտություն է նորաբանությունների մասին: Նորագիտությունն ուսումնասիրում է նոր բառերի, բառակապակցությունների և իմաստների առաջացման պատճառները, աղբյուրներն ու կազմության կաղապարները: Բառակազմական կաղապար ասելով հասկանում ենք «...մի կայուն կառույց, որն ունի ընդհանրացված բառակարգային (դեսիգնատիվ) իմաստ և կարող է լցվել տարբեր նյութով» (М. Смоленова, 1968, էջ 149):

Նեղ առումով «նորաբանություն» տերմինը գործածվում է լեզվի մեջ մտած և դեռևս ընդհանրացում չստացած նոր բառերը, դարձվածքները, ինչպես նաև նոր իմաստավորում ստացած բառերը նշելու համար: Լայն առումով «նորաբանություն» են համարվում լեզվի զարգացման յուրաքանչյուր նոր փուլում բառապաշարի մեջ մուտք գործած բոլոր նոր բառերը (Հ. Պետրոսյան, 1975, էջ 236):

Լեզվաբանական գրականության մեջ տարբերակվում են *նոր բառ* և *նորաբանություն* հասկացությունները: Նոր բառեր պետք է համարել ժամանակակից անգլերենի այն բոլոր բառերը, որոնք լեզվի տվյալ փուլում հանդես գալով իբրև նորաբանություններ, աստիճանաբար ընդարձակում են իրենց գործունեության և կիրառության շրջանակները և բառապաշարի ոչ գործուն շերտից անցնում են գործուն շերտ: Այս բառերն իրենց քանակով տասնապատիկ անգամ գերազանցում են նորաբանություններին:

Նորարարություններ են համարվում իմաստային այն միավորները (բառ, բառիմաստ կամ բառակապակցություն), որոնք լեզվում նոր առաջացած լինելու պատճառով դեռ համագործածական բառապաշար չեն անցել: Իմաստային միավորը նորարարություն է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ խոսողը գիտակցում է դրա նորությունը: Նորարարության նոր բառ դառնալու կամ նոր միավորի վերածվելու առաջին անհրաժեշտ պայմանը տվյալ բառի գործածության հաճախականությունն է:

Բառագիտություն ու բառարանագիրները նոր բառ են կոչում այն միավորները, որոնք հայտնվում են ավելի ուշ ինչ-որ ժամանակային սահմանից, որն ընդունվում է որպես ելակետային: Լայն առումով նոր բառերի ժամանակային սահման պետք է համարել նոր անգլերենի ողջ շրջանը, իսկ նեղ առումով՝ 20-րդ դարի սկիզբը: Որոշ հետազոտողներ նորարարությունների համար այդ ժամանակային սահմանը համարում են 20-րդ դարի 50-ական թթ., ինչը գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ ժամանակաշրջան է համարվում:

«Վիկիպեդիա» հանրագիտարանում նշվում է, որ անգլերենի գրեթե բոլոր քաղաքագիտական տերմիններն ինչ-որ ժա-մանակ քաղաքագիտական նորարարություններ են եղել: Ժամանակի ընթացքում դրանք հանրայնացվել (socialization of neologisms) և գրանցվել են բառարաններում: *Left-ը* և *right-ը* իրենց քաղաքական իմաստը ձեռք են բերել 1789 թ. Ֆրանսիական հեղափոխության սահմանադիր ժողովի նիստից հետո: *Bolshevik* տերմինն սկսել է գործածվել 1917թ., երբ Լենինի խմբակցությունը մեծամասնություն դարձավ: Ս. Գորբաչովն առաջինն արտասանեց *непреступка* - վերակառուցում, *гласность* - հրապարակայնություն բառերը: Սրանց պես շատ տերմիններ պատահականորեն մտան պատմության մեջ և սկսեցին լայնորեն գործածվել քաղաքագիտական բառապաշարում 1980թ.թ.

Նոր բառի ստեղծումն ընթանում է հետևյալ փուլերով:

- նոր բառի ստեղծումը մարդու կողմից (*originator*),
- բառի հանրայնացում (բառի ընդունումը հասարակության կողմից),
- բառի բառայնացում (բառի ամրապնդումը լեզվի համակարգում),
- բառի տարածումը միջնորդների կողմից (*purveyors*):

Նորարարությունները լեզու են ներթափանցում մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության միջոցով: Մամուլը ներկայացնում է բառի գրավոր տեսքը, ուղղագրությունը: Ռադիոն և հեռուստատեսությունը տալիս են բառի հնչյունական պատկերը:

Ս.Կ. Բարլեգիզյանը առանձնացնում է նոր բառերի երեք շերտ.

ա) դիպվածաբանություններ (օտար կամ վաղանցիկ բառեր և արտահայտություններ), բ) նորարարություններ, որոնք դեռ չեն կայունացել, գ) նորաբա-

նություններ, որոնք անցել են "հանրայնացման" փուլը և արձանագրվել բացատրական բառարաններում (Ա. Բարլեզիզյան, 1997, էջ 73-74):

Ըստ Օ. Ս. Ախմանովայի, նորաբանությունները լեզվի մեջ են մտնում բառակազմության, բառապատճենման և փոխառության ճանապարհով, վերաբերելով նոր առարկայի կամ նոր հասկացության (Օ. Շ. Ахманова, 1969, էջ 269):

Լեզվաբանական գրականության մեջ տարբերակվում են բառային (առանձին բառեր, կայուն բառակապակցություններ) և իմաստային նորաբանություններ:

Նոր առարկաներ ու հասկացություններ նշող նոր բառերն ընդունված է համարել բառային (խոսքային) նորաբանություններ, օրինակ՝ *imagemaker*, *summit*, *internet*: Իսկ եթե հին բառածկին վերագրվում է նոր իմաստ, ապա այն անվանում են իմաստային նորաբանություն: Օրինակ՝ *velvet* – թավիշ բառը "*Velvet*" Revolution – թավշյա հեղափոխություն բառակապակցության մեջ ստանում է «առանց ցնցումների, անարյուն» իմաստը: *Axis of evil*, *evil empire* տեսակի բառակապակցությունները, ուր բառերի կապերն իրար հետ բավականին անսովոր են, կոչվում են բառակապակցային նորաբանություններ:

Լեզվաբանական գրականության մեջ տարբերում են նորաբանությունների ստեղծման ներքին և արտաքին ուղիներ.

Նորաբանությունների ստեղծման ներքին ուղին դրանց ստեղծումն է օտար ազդեցությունից անկախ, լեզվի ներքին միջոցներով, այսինքն՝ արդեն գոյություն ունեցող բառակազմական կաղապարների, բառերի և ձևայինների հիման վրա: Այդ բառերի և ձևայինների վերլուծությունը կարող է օգնել պարզելու նորաբանության իմաստը:

Ժամանակակից անգլերենի բաղաբազիտական նորաբանությունների ստեղծման ներքին գործուն միջոցներն են՝

1) *Ածանցում*. Նոր տերմիններ են ստեղծվում լեզվում գոյություն ունեցող ձևայիններից, արդեն հայտնի և սովորաբար գործուն բառակազմական կաղապարներով: Օրինակ՝ *meritarian* – արժանավարական, *sexism* – սեռական խտրականություն, *genderism* – կանանց խտրականություն, *Al-Qaedaism* – ալքա-իդականություն, *Europeanism* – եվրոպականություն, *minoritarianism* – փոքրամասնականություն: Վ.Ի. Ջաբոտկինան նշում է *-ism* վերջածանցի մի նոր իմաստ՝ որևէ կանոնի պահպանում, որևէ կանոնի հետևելը, օրինակ՝ *Afroism* – աֆրիկյան մշակույթի պահպանում: Այս ձևով կազմված նորաբանությունների իմաստը հասկանալու համար պետք է լավ իմանալ բաղաբազիտական տերմինաշինության մեջ գործածվող գործուն ածանցները, ինչպես նաև կարողանալ բառը ճշտորեն բաղադրիչների բաժանել:

2) *Բառաբարդում (compounding)*. Օրինակ՝ *Americocentrism* – ամերիկականենտրոնություն, *islamofascism* – իսլամաֆաշիզմ: Բառաբարդումն անենահին

բառակազմական միջոցներից է և իր կենսունակությունը պահպանում է նաև անգլերեն լեզվի զարգացման ներկա փուլում (Առնոլդ Ի.Վ, 1959, էջ 157):

Կառուցվածքային տեսանկյունից բարդ բառերին հատուկ է հերթականությունն ու դասավորվածությունը, ուր հիմքերը հետևում են մեկը մյուսին: Անգլերենում բարդ բառի երկրորդ անմիջական բաղադրիչն է բարդ բառի գլխավոր անդամը, այսինքն՝ նրա կառուցվածքային և իմաստային կենտրոնը: Գլխավոր անդամը մեծ նշանակություն ունի, քանզի հենց նրանով է պայմանավորված բարդ բառի առաջին բաղադրիչի և՛ բառաքերականական, և՛ իմաստային հատկանիշները: Բարդ բառերն ի տարբերություն կայուն բառակապակցությունների, անբաժանելի են:

Իմաստի տեսանկյունից բարդ բառի իմաստային ամբողջականությունը հիմնվում է այն դրույթի վրա, որ բարդ բառի իմաստը նրա բաղադրիչների իմաստների պարզ հանրագումարը չէ: Բարդ բառերը սովորաբար պատճառաբանված միավորներ են:

Ժամանակակից անգլերենի քաղաքագիտական նորակազմությունների մեծ մասը բարդ բառեր են, որոնք բաղկացած են երկու և ավելի հիմքերից և շատ հարմար միջոց են բարդ քաղաքագիտական հասկացությունները սեղմ արտահայտելու համար, ինչը շատ կարևոր է տերմիններ կազմելիս: Անգլերենում բարդ բառերի հիմնական կաղապարներն են՝ գոյական+գոյական = գոյական, բայ + գոյական = գոյական, գոյական + ածական = ածական Այս կանոնը վերաբերում է նաև գոյական + դերբայական ածականներ կաղապարին: Ածական+ գոյական = գոյական, ածական+ածական = ածական, ածական + դերբայ = ածական, ածական+բայ = բայ, գոյական+բայ = բայ: Անգլերենի քաղա-քագիտական բառապաշարում մեծ տեղ են գրավում գոյական + դերբայ II կաղապարով կազմված բարդ բառերը (Մեշկով Օ.Դ., 1976): Անգլերեն լեզվի հայտնի հետազոտող Զ. Մարչանդը նշում է, որ «բարդ բառերը (ո + participle II) գործնականում այսօր անսահմանափակ են, հատկապես տերմիններում»: Օրինակ՝ class-divided society դասակարգային հասարակություն, American-inspired independence Ամերիկայի ոգեշնչած անկախությունը, American-financed Ամերիկայի կողմից ֆինանսավորվող: Հաշվի առնելով ժամանակակից անգլերենի բառաբարդման առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս նույն բառա-քերականական բնութագիրն ունեցող բառերի կապակցություններին հանդես գալ և՛ որպես բարդ բառեր, և՛ որպես բառակապակցություններ, դժվար է պարզել, թե արդյոք մենք գործ ունենք բարդ բառ նորաբանությամբ, թե՞ բառակապակցություն նորաբանության հետ: Բարդ բառերն ու բառակապակցությունները տարբերակելու ամենակարևոր չափանիշը ուղղագրական չափանիշն է, այսինքն՝ բառերի յուրաքանչյուր կապակցություն, որը գրվում է միասին կամ գծիկով, պետք է համարել

բարդ բառ, իսկ առանձին գործածված բառերի կապակցությունները պետք է համարել բառակապակցություններ:

3) *Փոխակարգում (conversion)*, օրինակ՝ vote - քվե և քվեադ - կել, հեկ - ոխակ և ոխակի դիմել: Ինչպես հայտնի է, բառակազմական փոխակարգություն նշանակում է նոր բառ կազմել առանց որևէ հստակ բառակազմական միջոցների, օրինակ՝ ածանցների: Փոխակարգությունը մի բառովի խոսքամասային իմաստի փոփոխությունն է առանց բառովի ենթյունական ձևի փոփոխության: Նոր բառը ստեղծվում է բառի թերականական հարգույցը և կիրառության շարահյուսական առանձնահատկությունները փոփոխելով: Անգլերեն լեզվի զարգացման ընթացքում թեքույթներն աստիճանաբար կրճատվել է, սակայն ձևաբանական մակարդակում տարբեր խոսքի մասերի՝ հատկապես գոյականների և բայերի միջև, որոշակի տարբերությունը պահպանվել է: Հասն Մարչանդը փոխակարգությունը համարում է ածանցման մի ճյուղ զրո ձևույթի օգնությամբ (Հասն Մարչանդ, 1969, էջ 112): Անգլերենում փոխակարգության առավել գործուն տեսակը գոյականից բայ կազմելն է: Այս, ինչպես նաև գոյականներից ածանցյալ բայերի կազմության դեպքում, բավականին դժվար է բացահայտել կաղապարի ընդհանուր բառակազմական նշանակությունը: Անգլերենում փոխակարգության մի այլ գործուն տեսակ է գոյականների կազմությունը ածականներից և դերբայներից: Փոխակարգության նման տեսակը հատկապես բնութագրական է շարահյուսական բառակազմության համար (Ցարյով Պ.Վ., 1984, էջ 6-11): Փոխակարգության համար ձևաբանական սահմանափակումներ չկան: Փոխակարգվել կարող են պարզ, ածանցյալ և բարդ բառերը, սկզբնատառային հապավումները (Acronyms), խառնուրդները (Blends) Որոշ վանկերի սղումից առաջացած բառերը (Clipping) նույնպես կարող են փոխակարգվել: Թվում է թե, բոլոր ձևախմբերը (form classes) կարող են ենթարկվել փոխակարգության, իսկ փոխակարգությունն իր հերթին կարող է ստեղծել ցանկացած ձևախմբին պատկանող բառեր (գոյական, բայ, ածական, մակ-բայ): Փոխակարգությունը լրիվ ազատ գործընթաց է, և ցանկացած բառույթ (lexeme) կարող է ենթարկվել փոխակարգության որևէ ձևային խմբում: Փոխակարգության հիմնական տեսակներն են՝ գոյական-բայ, բայ-գոյական, ածական-գոյական և ածական-բայ:

4) *Հետադարձ կազմություններ (Back-formation)*. Սա այն գործընթացն է, երբ բառեր են ստեղծվում դուրս թողնելով նախածանցը կամ վերջածանցը: Այս դեպքում հիմնականում բայեր են ստեղծվում գոյականներից: Օրինակ՝ *to assassinate (assassination), to legislate (legislation)*:

5) *Հապավում (abbreviation)*, օրինակ՝ OSCE - Organization of Security and Cooperation in Europe - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), CIA - Commonwealth of Independent States - Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ):

6) *համադրոյններ (blend)*, օրինակ՝ *Eurabia* (Europe+Arabia) - եվրաարաբա:

7) *Նոր քառի տողմում արդին գոյություն ունեցող բառածին նոր իմաստ վերագրելու միջոցով*, օրինակ՝ *paralysis* (կաթված) քառի նոր իմաստը, *Paralysis of power* - իշխանության կաթվածահարություն բառակապակցության մեջ, ուր այն նշանակում է «իշխանությունների, տնտեսական, սոցիալական և քաղաքական լծակների լրիվ անգործություն»: *Shady* (ստվերային, ստվերոտ) քառի «ընդլիմության կառավարություն» և «անօրինական հարստացում» իմաստները *shady cabinet* - ստվերային կաբինետ և *shady economy* - ստվերային տնտեսություն բառակապակցություններում:

Անգլերենի քաղաքագիտական նորարարությունների ստեղծման արտաքին ուղին ենթադրում է նոր տերմինների ստեղծումը օտար լեզուների ազդեցությամբ: Այն բաժանվում է մի քանի ենթաշերտի. ա) փոխառություն այլ լեզուներից, բ) ազատ բարգմանություն-նորակազմություններ, գ) պատճենումներ: Ստորև տրվում են տարբեր լեզուներից անգլերենի կատարած քաղաքագիտական տերմինների փոխառությունների որոշ օրինակներ ըստ Վ. Դ. Առակինի:

Արաբերենից կատարված քաղաքագիտական, ինչպես նաև կրոնական հասկացություններ արտահայտող փոխառություններն են՝ *hezbollah* - հեզբոլլահ, *intifada* - ինտիֆադա, *islam* - իսլամ, *jihad* - ջիհադ, *Koran* - Դորան, *mujahedeen* - մոջահեդ, *mullah* - մոլլա, *muslim* - մուսուլման, *shilte* - շիիթ, *taliban* - քալիբսն և այլն:

Ռուսերենից կատարված փոխառությունները հիմնականում խորհրդային ժամանակաշրջանին հատուկ բառեր են, որոնք վերաբերում են հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ստեղծված հասարակարգին: Օրինակ՝ *soviet*-սովետ, *խորհուրդ*, *kolkhoz* - կոլտնտեսություն, *sovkhos* - խորհրդային տնտեսություն, *bolshevik*-մեծամասնական, *bolshivism* - մեծա-մասնականություն, *komsomol* - կոմերիտմիություն, կոմերիտա-կան: *Pioneer* և *brigade* բառերն անգլերենում գոյություն ունեին դեռ նախքան սովետիզմների փոխառությունը, սակայն մասնական կոմունիստական կազմակերպության անդամի և աշխատանքային կոլեկտիվի իմաստը նրանք ստացան հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի ռուսերենի ազդեցությամբ, ինչն իմաստային փոխառության օրինակ է: Իմաստային փոխառության օրինակ են նաև *socialist emulation* - սոցիալիստական մրցություն, *five - year plan* - հնգամյա պլան բառակապակցությունները:

Իտալերենից անգլերեն են անցել *bank-բանկ*, *bankrupt* - սնանկ, *fascism*-ֆաշիզմ, *fascist*-ֆաշիստ բառերը:

Իսպաներենից անգլերենը փոխառել է *embargo* - արգելք, *guerrilla* - պարտիզանական պատերազմ բառերը:

Լատիներենից անգլիերենը փոխառել է *paternalism* - հայրավարություն, *patriarchal* - հայրիշխանական, *social* - հասարակավարական, *summit* - գագաթնաժողով, *universal* - համընդհանուր բառերը:

Ֆրանսերենից կատարված փոխառությունների օրինակներ են՝ *revolution*-հեղափոխություն, *patriotic* - հայրենասիրա-լիսն, *sovereign* - ինքնիշխան, *nation*-ազգ, *organization*-կազմակերպություն, *demonstration* - ցույց:

Հունարենից կատարված փոխառություններ են՝ *triumph* - հաղթանակ, *autocracy* - ինքնակալություն, *anarchy* - անիշխանություն, անիշխանապետություն:

Փոխառվում են ոչ միայն բառերն, այլև ձևույթները: Բազմաթիվ հունալատինական բառեր դարձել են միջազգային նախածանցներ, օրինակ՝ *anti-*, *inter-*, *sub-*, *ultra-* և այլն: Բոլոր լեզուներում լայնորեն օգտագործվում են հունարեն *-ist*, *-ism*, վերջածանցները:

Միջազգային բառերը փոխառված են մինևույն լեզվից, ունեն ուղղագրական և հնչյունական նմանություն և մի շարք լեզուների սեփականությունն են հանդիսանում: Սրանք հիմնականում հունալատինական բառեր են՝ *democracy*-ժողովրդավարություն, *proletariat* - պրոլետարիատ, բանվոր դասակարգ և այլն: Ժամանակակից լեզուները նույնպես կարող են միջազգային բառեր տալ:

Լորաբանությունների հատուկ խումբ են կազմում բառային և բառակապակցական պատճենումները, օրինակ՝ անգլիերենի *skinhead*-ի, *hot line*-ի և *brain drain*-ի հայերեն համարժեքներն են «սափրագլուխ», « քեժ գիծ» և «ուղեղների արտահոսք»:

Լորաբանություններից պետք է տարբերել դիպվածաբանությունները, որոնք խոսքային հաղորդակցության կոնկրետ պայմաններում առաջացած բառեր են: Դիպվածաբանությունների կազմությունը սովորաբար շեղվում է տվյալ լեզվի բառակազմության ընդունված միջոցներից: Դիպվածաբանություններին մոտ են ներգոր բառերը, որոնք լեզվի բառապաշարում գոյություն չունեցող լեզվական միավորներ են, բայց որոնք հեշտորեն կազմվում են լեզվում գոյություն ունեցող բառակազմական կաղապարներով: Որոշ լեզվաբաններ լեզվում ստեղծվող բոլոր ներգոր բառերը դասում են ռճական բառերի կարգին, սակայն ներգոր բառերի ստեղծումը չի սահմանափակվում միայն բառակազմության ռճական կարիքներով: Մեկ այլ կարիք է «նախկինում բառակապակցությամբ նկարագրված, արդեն հայտնի հասկացությունը մեկ բառով նշելու ձգտումը» [Յարյով Պ.Վ., 1978թ., էջ 22]: Անգլերեն լեզվում ներգոր բառերն իրենց ձևաբանական կազմով ածանցյալ կամ բարդ բառեր են: «Դիպվածաբանություն» (*occasional word*) տերմինը կարելի է կիրառել այն բառերի համար, որոնք ներգործության նպատակով են ստեղծվում: Ըստ Պ. Վ. Յարյովի՝ ներգոր բառերի և դիպվածաբանությունների միջև անանցանելի սահման գոյություն չունի: Ե՛վ դիպվածաբանությունների, և՛ ներգոր բառերի

ստեղծման ժամանակ ռզուադործվում են միևնույն բառակազմական կաղապարները: Պիպկածաբանության յուրահատկությունը բացատրվում է նրա բաղադրիչների իմաստների ոչ սովորական կապակցելիությամբ, ինչը որոշակի ոճական տպավորություն է ստեղծում: Ներգոր բառի բաղադրիչների միջև գոյություն ունի բոլորի կողմից ընդունված սովորական կապակցելիություն: Ներգոր բառը սովորական բառի հաղորդակցական արժեքը չունի: Ներգոր բառի իմաստը հասկանալու համար, բացի նրա բաղադրիչների իմաստից, անհրաժեշտ է նաև իմանալ համապատասխան բառակազմական կաղապարները, ինչպես նաև բառի բաղադրիչների միջև եղած իմաստակառուցվածքային փոխհարաբերությունները: Անգլերենում ներգոր բառերի առանձնահատկությունը նրանց բաղադրիչների իմաստային թափանցիկությունն է, դարձվածքայնության բազակայությունը: Ամբողջ բառի իմաստն առաջանում է բաղադրիչների՝ հիմքերի, բառակազմական ածանցների իմաստից: Եթե ներգոր բառի իմաստը պարզ չէ, ապա այն բացահայտվում է համատեքստի շնորհիվ: Ներգոր բառերի մեկ այլ առանձնահատկությունը նրանց համապատասխանությունն ու հարաբերվածությունն է ազատ բառակապակցությունների և նույնիսկ նախադասությունների հետ: Շատ դեպքերում հնարավոր է բառը ձևափոխել բառակապակցության, և հակառակը, բառակապակցությունը՝ բառի:

Նորաբանության մեկ այլ տեսակ էլ կարելի է համարել հեղինակային նորակազմությունները, որոնք հաճախակի գործածության արդյունքում նույնպես կարող են անցնել համագործածական բառապաշար և դառնալ նոր բառեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալեզիզյան Ա.Կ., Հայ-ֆրանսիական լեզվական առնչությունները 19-րդ դարում, Եր., 1997:
2. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազույան Թ., Լեզվաբանական բառարան, Եր., 1975:
3. Аракин В.Д., История английского языка, М., 1985.
4. Арнольд И.В., Лексикология современного английского языка, М., 1959.
5. Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., 1969.
6. Заботкина В.И., Новая лексика современного английского языка, М., 1989.
7. Мешков О.Д., Словообразование современного английского языка, М., 1976.
8. Степанова М.Д., Методы синхронного анализа лексики. М. 1968.
9. Царьев П.В., Транспозиция в английском словообразовании, ИЯШ, 1984, # 5.
10. Царьев П.В., Потенциальная лексика в современном английском языке, ИЯШ, М., 1978, N1.
11. Akhmanova O., Patterns and productivity, М., 1979.
12. Ginzburg R.A., A course in Modern English Lexicology, Moscow, 1979.
13. Marchand H., The Categories and Types of Present-day English Word-Formation, Wiesbaden, 1960.
14. Marchand H., Studies in Syntax and Word-Formation. Readings in Modern English Lexicology, Leningrad, 1969.